ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ք. Երևան, 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+ 374 10) 44-34-80, (+ 374 60) 37-26-56
Հեռ.՝ (+ 374 10) 44-29-04, (+ 374 60) 37-77-37

Ե 40/11-7210
«18» 12 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝
ԱՐԱՅԻԿ ԵՍԱՅԱՆԻՆ

**Հարգելի՛ պարոն Եսայան,**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության (Այսուհետև՝ ՔԿ ծառայություն) կարիքների համար 2025թ.-ի ընթացքում անկողնային պարագների ձեռքբերման նպատակով, էլեկտրոնային աճուրդի ձևով, ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով՝ հայտարարված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով գնման ընթացակարգի N 5 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող, մասնակից է ճանաչել «Վինդորան» ՍՊԸ-ին:

Հրավերով սահմանված ժամկետում, «Վինդորան» ՍՊԸ-ն չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումներն, ինչպես նաև էլեկտրոնային աճուրդի համակարգում չի կցել իր կողմից ստորագրված Պայմանագիրը, որի արդյունքում՝ «Վինդորան» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի բ/ ենթակետի՝ «Վինդորան» ՍՊԸ-ին պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Սահմանված կարգի համաձայն, ներկայացնում եմ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման պատճեն՝ «Վինդորան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Առդիր՝ « 2 » թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ

Կատարող՝ Նելլի Աբովյան
ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն, ՆՏՍ բաժին
Հեռ. (060) 371-861

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

**«18» դեկտեմբերի 2024թ.** N 26-Լ

### «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ՎԻՆԴՈՐԱՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության (Այսուհետև՝ ՔԿ ծառայություն) բոլոր քրեակատարողական հիմնարկների կարիքների համար 2025թ.-ի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների և կալանավորված անձանց համար նախատեսված անկողնային պարագների ձեռքբերման նպատակով, էլեկտրոնային աճուրդի ձևով, ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով՝ 08.11.2024թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով գնման ընթացակարգ: «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 19.11.2024թ-ին ժամը 11:00-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվել է 20.11.2024թ.-ին ժամը 11:00-ին: Նշված գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժնին մասնակցել են թվով 15 մասնակիցներ, այդ թվում՝ «Վինդորան» ՍՊԸ-ն:

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.11.2024թ.-ին գնման ընթացակարգի N 5 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող, մասնակից է ճանաչել «Վինդորան» ՍՊԸ-ին:

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետը ավարտվել է 01.12.2024թ.-ին և անգործության ժամկետի ավարտից հետո՝ չորրորդ աշխատանքային օրը՝ 05.12.2024թ.-ին, «Վինդորան» ՍՊԸ-ին համակարգի միջոցով ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցում և կնքվելիք պայմանագրի նախագիծ, որպեսզի Հրավերով սահմանված ժամկետում՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, «Վինդորան» ՍՊԸ-ն ներկայացնի որակավորման և պայմանագրի ապահովումները՝ Հրավերի հավելված 4.2 և հավելված 5.1 ձևերին համապատասխան (տուժանքի մասին համաձայնագրի ձևով), ինչպես նաև համակարգում կցի իր կողմից կնքված պայմանագիրը: Պայմանագիր կնքելու համար նախատեսված ժամկետը՝ Հրավերով սահմանված 5 աշխատանքային օրն, ավարտվել է 13.12.2024թ.-ին: Հրավերով սահմանված ժամկետում, «Վինդորան» ՍՊԸ-ն չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումներն, ինչպես նաև էլեկտրոնային աճուրդի համակարգում չի կցել իր կաղմից ստորագրված Պայմանագիր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 2024 թվականի դեկտեմբերի 16-ին, ժամը՝ 12:00-ին հրավիրել է նիստ և որոշում է կայացրել՝ «Վինդորան» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը և գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի, 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն, «Վինդորան» ՍՊԸ-ն որպես ընտրված մասնակից զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի բ/ ենթակետով՝ «Վինդորան» ՍՊԸ-ին պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված չի եղել հայտի ապահովում ներկայացնելու պահանջ.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  ԵՄ՝**

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Վինդորան» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև ներկայացվում է համապատասխան տեղեկատվությունն աղյուսակի տեսքով:

| Մասնակցի | | | | |
|---|---|---|---|---|
| Անվանումը | ՀՎՀՀ | Գործունեության հասցեն | Կնքված պայմանագրի միակողմանի լուծման իրավական հիմքը | Գնման ընթացակարգի ծածկագիրը |
| «ՎԻՆԴՈՐԱՆ» ՍՊԸ | 05560202 | Շիրակի մարզ, ք.Մարալիկ, Հ. Շահինյան փող. 4 նրբ./12վ/2 | «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի բ/ ենթակետ. Որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց | «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» |

**ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ**